17 հունիսի 2011 թվականի N 876 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 280-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի <<Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի եգիպտացորենի արտադրության զարգացման ծրագիրը հաստատելու և սերմերի ներմուծումը թույլատրելու մասին>> N 280-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ և 4-րդ ենթակետերով.

<<3) ներկրված եգիպտացորենի սերմացուից 1,45 տոննա <<Սերմերի գործակալություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով տրամադրել <<Արզնու տոհմային ԹՏԽ>> բաց բաժնետիրական ընկերությանը՝ կնքելով համապատասխան պայմանագիր.

4) <<Սերմերի գործակալություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով ապահովել ծրագրով սահմանված պայմաններին համապատասխան <<Արզնու տոհմային ԹՏԽ>> բաց բաժնետիրական ընկերությանը տրամադրված եգիպտացորենի սերմացուի դիմաց գանձվող գումարների հավաքագրումը և փոխանցումը Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականների ցորենի սերմնաբուծության և սերմնարտա-

դրության զարգացման ծրագրի իրականացման գործընթացի ապահովման համար բացված նպատակային հաշվին:>>.

2) որոշման հավելվածի 9-րդ կետը <<Վայոց ձորի>> բառերից հետո լրացնել <<Կոտայքի>> բառով.

3) որոշման հավելվածի 12-րդ կետում <<Սերմացուն>> բառը փոխարինել <<Մարզին տրամադրված սերմացուն>> բառերով.

4) որոշման հավելվածի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<13. Սերմացուն կբաշխվի ըստ մարզերի՝ հետևյալ չափաքանակներով.

Մարզը	Գործակցով հաշվարկված կշիռը (տոննա)
Արագածոտն	4,7
Արարատ	9,825
Արմավիր	14,548
Լոռի	11
Կոտայք	0,15
Սյունիք	1
Վայոց ձոր	1
Տավուշ	19,327
Ընդամենը	61,55

>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ